ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

"25" մարտի 2011թ № 47Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ <<ԳՈՐԻՍԻ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ N3>> ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ <<ՆԱԽԱԴՊՐՈՑԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅԱՆ ՏԱՐԱԾՔԻ ԲԱՐԵԿԱՐԳՄԱՆ ՕԺԱՆԴԱԿ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐ ԵՎ ՍԱՆԻՏԱՐԱԿԱՆ ՄԱՔՐՈՒՄ>> ԾՐԱԳԻՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Հայաստանի Հանրապետության 2011թ. պետական բյուջեի մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի՝ <<Վարձատրվող հասարակական աշխատանքներ>>ծրագրով, Հայաստանի Հանրապետության նախագահի 1997թ. մայիսի 6-ի <<Հայաստանի Հանրապետության մարզերում պետական կառավարման մասին>> ՆՀ-728 հրամանագրի 1.6 կետի և 1.12 կետի բ) ենթակետի դրույթներով, համաձայն Հայաստանի Հանրապետության կառավարության 2004թ. դեկտեմբերի 23-ի <<Վարձատրվող հասարակական աշխատանքների կազմակերպման ոլորտները և անցկացման պայմանները հաստատելու մասին>> N 1854 որոշմամբ հաստատված հավելվածի 13-րդ կետի պահանջների ու Սյունիքի մարզային զբաղվածության աջակցության հանձնաժողովի 2011թ. մարտի 24-ի N 2 արձանագրությամբ հավանության արժանացած ծրագրի, ո ր ո շ ու մ ե մ.

1. Հաստատել Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի <<Գորիսի քաղաքային համայնքի N4>> համայնքային ոչ առևտրային կազմակերպության <<նախադպրոցական հաստատության տարածքի բարեկարգման օժանդակ աշխատանքներ և սանիտարական մաքրում>> ծրագիրը՝ համաձայն հավելվածի:
2. Ծրագրի իրականացման համար հատկացնել 396 674 (երեք հարյուր իննսունվեց հազար վեց հարյուր յոթանասունչորս) դրամ:
3. Ծրագրի սկիզբը համարել 2011թ. ապրիլի 1-ը, ավարտը՝ 2011թ. ապրիլի 29-ը:
4. Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզպետարանի աշխատակազմի ղեկավարին՝ ապահովել սույն որոշումից բխող անհրաժեշտ գործառույթների իրականացումը:

ՀՀ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏ Ս.ԽԱՉԱՏՐՅԱՆ

2011թ. մարտի 25
ք. Կապան